Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ՀԱՅԵԼԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԻԿ ԹԱՂՄԱՆ ԾԵՍՈՒՄ

Հայաստանի անտիկ թաղումների ուղեկցող նյութերի մեջ, թեև հազվադեպ, բայց կան նաև հայելիներ: Տարբեր ձևի, զարդանախշված կամ առանց զարդի, արծաթյա և բրոնզե հայելիներ հայտնաբերվել են Արտաշատից, Վաղարշապատից,[1] Գառնիից,[2] Բենիամինից և Անուշավանից:[3] Արտաշատի հայելիները (տրամ. 4,7սմ) բրոնզի թիթեղից են, շրջանաձև, առանց զարդի՝ բոլորն էլ խիստ քայքայված: Միայն ճահիճների մեջ գտնվող բլրի վրա բացված դամբարանի գտածոն է ամբողջական և լավ պահպանված (տրամ.՝ 6,5սմ):[4] Արտաշատի դամբարանադաշտերում հայելիների առկայությունն ըստ ժ. Խաչատրյանի, կապվում է անդրշիրիմյան պատկերացումների հետ և ունի պաշտամունքային նշանակություն:[5] Գառնիում հայելիները գտնվել են կանանց թաղումներից՝ այլ զարդերի հետ:[6]

Շրջանաձև, անպոչ հայելիներ անտիկ Հայաստանում հանդիպում են սկսած մ. թ. ա. II-I դարերից, և լայն տարածում են ստանում մ. թ. առաջին դարերում: Այս երևույթը նկատելի է հատկապես Գառնիում, որտեղ II-I դարերի հայելիները քիչ են, իսկ I-III դարերի դամբարաններում ավելի հաճախ են հանդիպում:[7] Արտաշատի մ. թ. ա. I և մ.թ. II դարերի հայելիները հիմնականում գործածվել են քաղաքային բնակչության ստորին խավերի կենցաղում:[8] Արտաշատի հայելիները շատ վատ են պահպանված և մեծ մասամբ հնարավոր չէ որոշել դրանց չափերը:[9] Բենիամինում հայելի գտնվել է ավերված դամբարանից, իսկ Անուշավանում՝ շինարարական աշխատանքների ժամանակ բացված թաղումից: Բենիամինում անհայտ է կմախքի նկատմամբ հայելու ունեցած դիրքը: Անուշավանում հայելին դրված է եղել ննջեցյալի գլխի տակ: Նշված թաղումների մարդաբանական տվյալներ նույնպես չկան և անհայտ է՝ հայելին կնոջ, թե տղամարդու հետ է դրվել: Բենիամինի հայելին բրոնզի բարակ թիթեղից շրջան է՝ կոթի համար նախատեսված ելուստով: Հայելու տրամագիծը 9, 3սմ է, պոչի երկարությունը 2սմ, լայնությունը՝ 1,3սմ: Կոթի մասը բարակ է՝ ծայրին փոքր անցքով: Հայելու սկավառակի եզրերը կտրտված են: Անուշավանից գտնված հայելին (տրամ.՝ 13,7սմ) նույնպես բրոնզի թիթեղից է՝ եզրերը քիչ բարձր և ներս հակված: Հակառակ երեսին համակենտրոն զույգ շրջաններ են: Սկավառակի եզրին պահպանվել են կոթն ամրացնելու համար արված զույգ անցքեր: Եվ Բենիամինի, և Անուշավանի հայելիները թվագրվում են մ.թ.I դ.:

Հայաստանում ավելի շատ հայելիներ գտնվել են Արտաշատի և Գառնիի անտիկ թաղումներից: Բենիամինում, ուր պեղվել է 245 դամբարան, միայն մի հայելի է գտնվել: Այստեղ հիմնականում միջին և աղքատ թաղումներ են, և բնական է հայելու եզակի լինելը: Երբեմն նույնիսկ հարուստ թաղումներ ունեցող դամբարանադաշտերում հայելիները հազվադեպ են: Օրինակ, Ուլգարակում հայելիներ գտնվել են բացառապես միայն քրմուհիների դամբարաններից:[10]

Հայելիների տարածման տիրույթը շատ մեծ է: Բրոնզե և արծաթյա, փայլեցված շրջանաձև հայելիներ հայտնի են Էգեյան Հունաստանից և Մեծ Հունաստանից, իսկ միքենյան ժամանակաշրջանում Հունաստանում պատրաստվում էին նաև ձեռքի հայե-

---

[1] *Ժ. Խաչատրյան, Արտաշատ 2, Եր., 1981թ, էջ 85:*
[2] *Ж. Хачатрян, Гарни V, Античный некрополь, Ер., 1976, стр. 97.*
[3] *Լ. Եգանյան, Ծիսական իրերը Բենիամինի անտիկ թաղումներում, ՀՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 4, Գյումրի, 2001, էջ 11:*
[4] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 85:*
[5] *Նույնը:*
[6] *Ж. Хачатрян, նշվ. աշխ., էջ 97:*
[7] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 85; Ж. Хачатрян, նշվ. աշխ., էջ 97, 119:*
[8] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ, 87:*
[9] *Ж. Хачатрян, նշվ. աշխ., էջ 119:*
[10] *О. Вишненская, Культура сакских племен низовьев Сырдарьи в VII-V вв. до н. э. Труды ХАЭЭ VIII, М., 1973, стр 8.*

լիներ:[11] Նախշազարդ, փորագիր տարբեր ֆիգուրներով հայելիները գործածական էին էտրուսկների մոտ, իսկ մ. թ. ա. V դ. Հունաստանում հայտնվում են նաև ծալովի հայելիները:[12] Շրջանաձև, տափակ հայելիները տարածված էին Հունաստանում հելլենիստական և վաղ հռոմեական շրջանում:[13] Հայելիներ գտնվել են Թուփ-Խոնեից,[14] լայն տարածում ունեին Չինաստանում[15] և օգտագործվում էին թաղման ծեսում: Տափակ, հարթ ու շրջանաձև հայելիներ հայտնի են Կերչից և թվագրվում են մ. թ. ա. I և մ. թ. I դարերով:[16] Սկյութական Նեապոլում գտնված հայելիները թվագրվում են մ. թ. ա. III - I դարերով: Նույն ժամանակաշրջանով են թվագրվում նաև Ուստ-Լաբինսկում գտնվածները:[17] Հայելիներ հայտնի են Դուրա - Եվրոպոսի՝ I IV դդ. թվագրվող դամբարաններից:[18]

Հետաքրքիր են Խերսոնեսից գտնված կապարե շրջանակներով հայելիները, որոնք նվիրատվական բնույթի արձանագրություններ ունեն: Դրանք դիտվել են որպես մոգության հետ կապված իրեր, արդուզարդի առարկա, խաղալիք, թալիսմաններ, նաև ընծաներ, որ տիրուհու մահից հետո, որպես թանկարժեք հիշատակներ, ընդգրկվել են թաղման գույքի մեջ:[19] Հայտնի է, որ հնում մարդուն նվեր արվում էր ոչ միայն կենդանության օրոք, այլ նաև թաղման արարողակարգի ժամանակ:[20] Հետազոտողներն այն կարծիքին են, որ կապարե հայելիները կարող էին ծառայել որպես այն աշխարհ անցնելու թույլտվություն, այսինքն՝ յուրահատուկ անցաթուղթ:[21]

Իրանում հայտնաբերված հայելիներն այլ ձև և ծիսական իմաստ ունեն: Այստեղ Անահիտին և Միհրին նվիրված տաճարից գտնվել են կանացի մոտավոր կերպարանքով հայելիներ: Որպես կոթ պատկերված են ոտքերը, գլխի փոխարեն ամրացված է հայելու սկավառակը: Ըստ Ռ.Գիրշմանի՝ հայելիները խորհրդանշում են Անահիտին և Միհրին, քանի որ գտնվել են այդ աստվածներին նվիրված տաճարից:[22] Հայելին ձեռքին կանացի արձանիկներ հայտնի են Միջին Ասիայի տարբեր հնավայրերի պեղումներից:[23] Հավանաբար հայելին եղել է կանացի աստվածության ատրիբուտ, բայց եղել է կապված նաև արևի հետ: Սրա օգտին է խոսում նաև հայելուն վերագրված գերեզման լուսավորելու հավատալիքը:[24]

Ինչպես տեսանք, տարբեր են հայելիների հետ կապված հավատալիքները: Տարբեր են նաև հայելիները դամբարանում դնելու սովորույթի մասին կարծիքները: Ըստ Բ. Լիտվինսկու՝ սովորույթը ծագել է սարմատների ժամանակ, և հնարավոր է, որ

---

[11] *Словарь античности, М., 1989, стр 214.*

[12] *Նույնը:*

[13] *G. Richterand, H. Alexander, A Greek mirror. Ancient or Modern. AIA 1917 n.3.*

[14] *Б. Литвинонский, А. Седов, Культы и ритуалы Кушанской Бактрии, Погребальный обряд, М., 1984, стр 46.*

[15] *R. Svalov, Ancient Chiese bronze mirrota, Peiping, 1937, p. 6.*

[16] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ, 87; В. Шилов, Раскопки Калинонского курганного могильника, КСИИМК вып. 59, 1955г, стр.125; Т. Арсеньева, Могильник у деревни Ново-Отродное, ПМКП, МИА, ном.155, М.,1970, стр. 132, 144.*

[17] *Н. Анфимов, Меото-сарматский могильник у станицы Усть-Лабинской, МИА, ном. 23, М-Л.,1951, стр 198.*

[18] *N.Toll, The Necropolis „ The excavations at Dura- Europos„. Preliminary Report of the Ninth season of work 1935-1936, New Haven, London, 1946, p.122 – 123.*

[19] *Ю. Калашник, Свинцовые рамки стеклянных зеркал из собрания Эрмитажа,- в кн. Из истории Северного Причерноморья в античную эпоху, Ленинград 1979, стр. 118.*

* *Մեր օրերում հանգուցյալին մատուցվող յուրահատուկ նվերներ են հուղարկավորության ծաղ կեպսակները՝ ժապավենների վրա արված նվիրատվական գրություններով:*

[20] *Նույն տեղում, էջ 122:*

[21] *В. Зубарь, О свинцовых зеркалах из некрополя Херсонеса в кн. Проблемы античной культуры, М., 1986, стр. 153.*

[22] *R. Girshman, Iran, Terrasses sacrees. Bard-e Nechandeh et Masdjidi Solaiman. Paris, 1976, p. 117.*

[23] *Б. Литвинский, Орудия труда и утварь из могильников Западной Ферганы, М., 1978, стр. 111.*

[24] *LoefferDelachaux M., Le cercle. Gen, 1947.*

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ՀԱՅԵԼԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԻԿ ԹԱՂՄԱՆ ԾԵՍՈՒՄ

Հայաստանի անտիկ թաղումների ուղեկցող նյութերի մեջ, թեև հազվադեպ, բայց կան նաև հայելիներ: Տարբեր ձևի, զարդանախշված կամ առանց զարդի, արծաթյա և բրոնզե հայելիներ հայտնաբերվել են Արտաշատից, Վաղարշապատից,[1] Գառնիից,[2] Բենիամինից և Անուշավանից:[3] Արտաշատի հայելիները (տրամ. 4,7սմ) բրոնզի թիթեղից են, շրջանաձև, առանց զարդի՝ բոլորն էլ խիստ քայքայված: Միայն ճահիճների մեջ գտնվող բլրի վրա բացված դամբարանի գտածոն է ամբողջական և լավ պահպանված (տրամ.՝ 6,5սմ):[4] Արտաշատի դամբարանադաշտերում հայելիների առկայությունն ըստ ժ. Խաչատրյանի, կապվում է անդրշիրիմյան պատկերացումների հետ և ունի պաշտամունքային նշանակություն:[5] Գառնիում հայելիները գտնվել են կանանց թաղումներից՝ այլ զարդերի հետ:[6]

Շրջանաձև, անպոչ հայելիներ անտիկ Հայաստանում հանդիպում են սկսած մ. թ. ա. II-I դարերից, և լայն տարածում են ստանում մ. թ. առաջին դարերում: Այս երևույթը նկատելի է հատկապես Գառնիում, որտեղ II-I դարերի հայելիները քիչ են, իսկ I-III դարերի դամբարաններում ավելի հաճախ են հանդիպում:[7] Արտաշատի մ. թ. ա. I և մ.թ. II դարերի հայելիները հիմնականում գործածվել են քաղաքային բնակչության ստորին խավերի կենցաղում:[8] Արտաշատի հայելիները շատ վատ են պահպանված և մեծ մասամբ հնարավոր չէ որոշել դրանց չափերը:[9] Բենիամինում հայելի գտնվել է ավերված դամբարանից, իսկ Անուշավանում՝ շինարարական աշխատանքների ժամանակ բացված թաղումից: Բենիամինում անհայտ է կմախքի նկատմամբ հայելու ունեցած դիրքը: Անուշավանում հայելին դրված է հոդ ննջեցյալի գլխի տակ: Նշված թաղումների մարդաբանական տվյալներ նույնպես չկան և անհայտ է՝ հայելին կնոջ, թե տղամարդու հետ է դրվել: Բենիամինի հայելին բրոնզի բարակ թիթեղից շրջան է՝ կոթի համար նախատեսված ելուստով: Հայելու տրամագիծը 9, 3սմ է, պոչի երկարությունը 2սմ, լայնությունը՝ 1,3սմ: Կոթի մասը բարակ է՝ ծայրին փոքր անցքով: Հայելու սկավառակի եզրերը կտրտված են: Անուշավանից գտնված հայելին (տրամ.՝ 13,7սմ) նույնպես բրոնզի թիթեղից է՝ եզրերը քիչ բարձր և ներս հակված: Հակառակ երեսին համակենտրոն զույգ շրջաններ են: Սկավառակի եզրին պահպանվել են կոթն ամրացնելու համար արված զույգ անցքեր: Եվ Բենիամինի, և Անուշավանի հայելիները թվագրվում են մ.թ.I դ.:

Հայաստանում ավելի շատ հայելիներ գտնվել են Արտաշատի և Գառնիի անտիկ թաղումներից: Բենիամինում, ուր պեղվել է 245 դամբարան, միայն մի հայելի է գտնվել: Այստեղ հիմնականում միջին և աղքատ թաղումներ են, և բնական է հայելու եզակի լինելը: Երբեմն նույնիսկ հարուստ թաղումներ ունեցող դամբարանադաշտերում հայելիները հազվադեպ են: Օրինակ, Ուլգարակում հայելիներ գտնվել են բացառապես միայն քրմուհիների դամբարաններից:[10]

Հայելիների տարածման տիրույթը շատ մեծ է: Բրոնզե և արծաթյա, փայլեցված շրջանաձև հայելիներ հայտնի են Էգեյան Հունաստանից և Մեծ Հունաստանից, իսկ միքենյան ժամանակաշրջանում Հունաստանում պատրաստվում էին նաև ձեռքի հայե-

---

[1] *Ժ. Խաչատրյան, Արտաշատ 2, Եր., 1981թ, էջ 85:*

[2] *Ж. Хачатрян, Гарни V, Античный некрополь, Ер., 1976, стр. 97.*

[3] *Լ. Եգանյան, Ծիսական իրերը Բենիամինի անտիկ թաղումներում, ՀՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 4, Գյումրի, 2001, էջ 11:*

[4] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 85:*

[5] *Նույնը:*

[6] *Ж. Хачатрян, նշվ. աշխ., էջ 97:*

[7] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 85; Ж. Хачатрян, նշվ. աշխ., էջ 97, 119:*

[8] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ, 87:*

[9] *Ж. Хачатрян, նշվ. աշխ., էջ 119:*

[10] *О. Вишневская, Культура сакских племен низовьев Сырдарьи в VII-V вв. до н. э. Труды ХАЭЭ VIII, М., 1973, стр 8.*

լիներ:[11] Նախշազարդ, փորագիր տարբեր ֆիգուրներով հայելիները գործածական էին էտրուսկների մոտ, իսկ մ. թ. ա. V դ. Հունաստանում հայտնվում են նաև ծալովի հայելիները:[12] Շրջանաձև, տափակ հայելիները տարածված էին Հունաստանում հելենիստական և վաղ հռոմեական շրջանում:[13] Հայելիներ գտնվել են Թուփ-Խոնեից,[14] լայն տարածում ունեին Չինաստանում[15] և օգտագործվում էին թաղման ծեսում: Տափակ, հարթ ու շրջանաձև հայելիներ հայտնի են Կերչից և թվագրվում են մ. թ. ա. I և մ. թ. I դարերով:[16] Սկյութական Նեապոլում գտնված հայելիները թվագրվում են մ. թ. ա. III - I դարերով: Նույն ժամանակաշրջանով են թվագրվում նաև Ուստ-Լաբինսկում գտնվածները:[17] Հայելիներ հայտնի են Դուրա - Եվրոպոսի՝ I IV դդ. թվագրվող դամբարաններից:[18]

Հետաքրքիր են Խերսոնեսից գտնված կապարե շրջանակներով հայելիները, որոնք նվիրատվական բնույթի արձանագրություններ ունեն: Դրանք դիտվել են որպես մոգության հետ կապված իրեր, արդուզարդի առարկա, խաղալիք, թալիսմաններ, նաև ընծաներ, որ տիրուհու մահից հետո, որպես թանկարժեք հիշատակներ, ընդգրկվել են թաղման գույքի մեջ:[19] Հայտնի է, որ հնում մարդուն նվեր արվում էր ոչ միայն կենդանության օրոք, այլ նաև թաղման արարողակարգի ժամանակ:[20] Հետազոտողներն այն կարծիքին են, որ կապարե հայելիները կարող էին ծառայել որպես այն աշխարհ անցնելու թույլտվություն, այսինքն՝ յուրահատուկ անցաթուղթ:[21]

Իրանում հայտնաբերված հայելիներն այլ ձև և ծիսական իմաստ ունեն: Այստեղ Անահիտին և Միհրին նվիրված տաճարից գտնվել են կանացի մոտավոր կերպարանքով հայելիներ: Որպես կոթ պատկերված են ոտքերը, գլխի փոխարեն ամրացված է հայելու սկավառակը: Ըստ Ռ.Գիրշմանի՝ հայելիները խորհրդանշում են Անահիտին և Միհրին, քանի որ գտնվել են այդ աստվածներին նվիրված տաճարից:[22] Հայելին ձեռքին կանացի արձանիկներ հայտնի են Միջին Ասիայի տարբեր հնավայրերի պեղումներից:[23] Հավանաբար հայելին եղել է կանացի աստվածության ատրիբուտ, բայց եղել է կապված նաև արևի հետ: Սրա օգտին է խոսում նաև հայելուն վերագրված գերեզման լուսավորելու հավատալիքը:[24]

Ինչպես տեսանք, տարբեր են հայելիների հետ կապված հավատալիքները: Տարբեր են նաև հայելիները դամբարանում դնելու սովորության մասին կարծիքները: Ըստ Բ. Լիտվինսկու՝ սովորույթը ծագել է սարմատների ժամանակ, և հնարավոր է, որ

---

[11] *Словарь античности, М., 1989, стр 214.*

[12] *Նույնը:*

[13] *G. Richterand, H. Alexander, A Greek mirror. Ancient or Modern. AIA 1917 n.3.*

[14] *Б. Литвиновский, А. Седов, Культы и ритуалы Кушанской Бактрии, Погребальный обряд, М., 1984, стр 46.*

[15] *R. Svalov, Ancient Chiese bronze mirrota, Peiping, 1937, p. 6.*

[16] *Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ, 87; В. Шилов, Раскопки Калиновского курганного могильника, КСИИМК вып. 59, 1955г, стр.125; Т. Арсеньева, Могильник у деревни Ново-Отродное, ПМКП, МИА, ном.155, М.,1970, стр. 132, 144.*

[17] *Н. Анфимов, Мсото-сарматский могильник у станицы Усть-Лабинской, МИА, ном. 23, М-Л.,1951, стр 198.*

[18] *N.Toll, The Necropolis „ The excavations at Dura- Europos,,. Preliminary Report of the Ninth season of work 1935-1936, New Haven, London, 1946, p.122 – 123.*

[19] *Ю. Калашник, Свинцовые рамки стеклянных зеркал из собрании Эрмитажа,- в кн. Из истории Северного Причерноморья в античную эпоху, Ленинград 1979, стр. 118.*
Մեր օրերում հանգույցային մատուցվող յուրահատուկ նվերներ են հուղարկավորության ծաղ կեպսակները՝ ժապավենների վրա արված նվիրատվական գրություններով:

[20] *Նույն տեղում, էջ 122:*

[21] *В. Зубарь, О свинцовых зеркалах из некрополя Херсонеса в кн. Проблемы античной культуры, М., 1986, стр. 153.*

[22] *R. Girshman, Iran, Terrasses sacrees. Bard-e Nechandeh et Masdjidi Solaiman. Paris, 1976, p. 117.*

[23] *Б. Литвинский, Орудия труда и утварь из могильников Западной Ферганы, М., 1978, стр. 111.*

[24] *LocfferDelachaux M., Le cercle. Gen, 1947.*

կոտրված բեկորը պահպանում էր ողջերին մեռածի հոգու հայտնվելուց: Եվ մ.թ.ա. I-մ. թ. I դարերում սարմատական դամբարաններում հայելիների մեծ մասը շարունակում էին դնել կոտրված վիճակում, որոշակի մասն էլ՝ ամբողջական:[25] Իսկ II-IV դարերում ուղեկցող իրերի մեջ ամբողջական հայելիների քանակն ավելանում է,[26] և V դարում էլ դեռևս շարունակում էին կոտրված հայելիներ դնել դամբարաններում:[27] Սակայն, հակառակ Բ. Լիտվինսկու ենթադրության, փաստվում է, որ մ. թ. ա. IV-II դարերում Պովոլժյեի և Մերձուրալի սարմատական դամբարաններում կոտրված հայելիներ էին դնում:[28] Սարմատական դամբարանում հայելու առկայությունը ենթադրել է տալիս, որ նրանց համար հայելին ունեցել է մոգական նշանակություն, նաև մոգական ազդեցություն: Այս պատճառով էլ հայելին կոտրում էին և նոր միայն դնում հանգուցյալի հետ՝ մոգական ուժերը համապատասխանեցնելով նոր վիճակին:[29] Քանի որ հայելին մոգական ուժերի կրողն է և արտացոլում է մարդու պատկերը, դրանով նաև՝ մարդու ողջ և առողջ վիճակը, ուրեմն հայելու տիրոջ մահից հետո այն պիտի կոտրվեր՝ խորհրդանշելով մեռած մարդուն: Ըստ Ա.Խազանովի՝ սարմատական թաղումներում հայելիները վնասվել են հանգուցյալի հոգին ազատելու համար:[30] Հայելին վնասելը կամ կոտրելը կատարվում էր հանգուցյալի հոգին ողջերի աշխարհ չար մտադրություններով ներխուժելուց ետ պահելու համար: Քանի որ հայելին իր մեջ կրել էր նաև հանգուցյալի պատկերը, ուրեմն այն վնասելով, վնասում էր նաև հանգուցյալին և դրանով կանխում նրա վերադարձը: Ծիսակարգը պահպանել և մեզ է հասցրել մոգական գործողության հիմնական գծերը, որոնցում հայելու «մահը» հաջորդել է տիրոջ մահվանը: Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է ենթադրել, որ հայելին նպատակամղված ձևով վնասելը կապված է թաղման ծեսի հետ և ողջերի վրա մոգական ազդեցության հետևանք է: Տիրոջ արտացոլումը կրող հայելին հավանաբար դիտվել է նաև հոգու կրող և ըստ այդմ էլ վնասվել է՝ ողջերի աշխարհ ննջեցյալի վերադարձը կանխելու համար: Իրի *սովերը* հնարավորություն է ունեցել հետևել իր տիրոջը դեպի այն աշխարհ:[31] Դամբարաններում կոտրված իրեր դնելու սովորությունը լայն տարածում ունի և երբեմն բացատրվում է նաև որպես դամբարանների թալանը կանխելուն միտված գործողություն:

Հայելիներ գտնվել են ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց թաղումներից: Սկյութական դամբարանադաշտերում հայելին առավելապես բնորոշ է կանանց թաղումներին:Շարքային սկյութների թաղումներում հայելի հազվադեպ է հանդիպում:[12]

Նիկոլաևկայի սկյութական մ. թ. ա. IV-III դարերի դամբարանադաշտում հայելիներ գտնվել են իրերի քանակով հարուստ երեք դամբարաններում, որոնցից մեկում տղամարդու թաղում է, իսկ մյուս երկուսում՝ կանանց: Նշված բոլոր թաղումներում հայելիներն ամբողջական են և գտնվել են ձախ կողմում՝ ննջեցյալի կրծքին կամ գլխին:[33] Այս դամբարաններում հայելիները դրվել են նաև կոտրված կամ բեկորների ձևով:

Ամբողջական և կոտրված հայելիներ կամ հայելու կտորներ գտնվել են նաև սարմատական դամբարաններից:[34] Մերձուրալի սարմատական թաղումներում քրմուհիների դամբարաններում սովորական է հայելու առկայությունը:[35] Պովոլժյեի սարմա-

---

[25] *Б. Литвинский, նշվ. աշխ., էջ108:*

[26] *Նույն տեղում, էջ 105:*

[27] *А. Хазанов, Религиозно-магическое понимание зеркал у сарматов, СЭ, ном. 3, 1964, стр. 94.*

[28] *В. Илов, Очерки по история древних племен Нижнего Поволжья, Л., 1975, стр. 121.*

[29] *А. Хазанов, Религиозно - магическое понимание зеркал у сарматов, СЭ, п. 3, 1964, стр . 91.*

[30] *Նույնը:*

[31] *S. Hartland, Death and disposal of the dead,- "encyclopaedie if religionand ethics" vol IV, New York,1911, p. 430.*

[32] *Э.Яковленко, Рядовые скифские погребения в курганах Восточного Крыма.- Св. Древности Восточного Крыма, Киев, 1970, стр. 121 (1962, 94); Б. Гракон, Скифские погребения на Никопольском курганном поле, МИА, ном 115, 1962, стр. 87.*

[33] *А. Мелюкова, Поселение и могильник скифского времени у села Николаевка, М., 1975, стр. 135.*

[34] *Т. Кузнецова, Зеркала в погребальных обрядах сарматов, СА, N 4, 1988, стр. 52 – 61.*

[35] *К. Смирнов, Бронзовое зеркало из Мечетная,- В сб. „История, археология и этнография Средней Азии„ М., 1968, стр. 117.*

տական առաջնորդների դամբարաններում գտնված հայելիներն ամբողջական են, գտնվել են գանգից աջ, ձախ ձեռքի դաստակի և աջ ուսագլխի մոտ: Վերջին դամբարանում հայելին, ի թիվս այլ իրերի, գտնվել է գանգի մոտ 40 x 20սմ չափերի 20սմ խորությամբ գաղտնարանի մեջ:[36] Գաղտնարանի մեջ պահելը հաստատում է հայելու թանկարժեք լինելը: Միտումնավոր կոտրված հայելիներ գտնվել են Ֆերգանայի տարբեր դամբարանադաշտերից:[37] Այս թաղումներում թաղման գույքից մեծ մասամբ կոտրված են միայն հայելիները: Հայելիները կամ դրանց բեկորները գտնվել են ոչ բոլոր դամբարաններում, որն անշուշտ սոցիալական շերտավորման արդյունք է:[38] Հետևաբար այդ բացատրությունը ճիշտ է առանձին թաղումների համար, սակայն ոչ այն թաղումների, որտեղ կոտրված են բացառապես միայն հայելիները:[39]

Իհարկե կարելի է միայն ենթադրություններ անել, թե ինչ է խորհրդանշում դամբարանում դրված հայելու կտորը: Ըստ ամենայնի, դամբարաններում հայելիները կարող էին կատարել տարբեր ֆունկցիաներ, այս իսկ պատճառով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պահանջվում է յուրահատուկ մոտեցում՝ ելնելով տվյալ ժողովրդի սովորույթներից և հավատալիքներից:

Թաղման ծեսում հայելիների կամ դրանց բեկորների օգտագործման ծիսական դերն ու իմաստը բացահայտելու համար նախ փորձենք պարզել երևույթի նախնական ընկալումները, որ պահպանվել են տարբեր ժողովուրդների, այդ թվում նաև հայերիս, տարաբնույթ հավատալիքներում և ծեսերում:

Ազգագրական նյութերը վկայում են, որ հայելիների բեկորների օգտագործումը բնորոշ է բազմաթիվ ժողովուրդների: Հայելիները կոտրում էին նպատակադրված, իրար հիշելու համար՝ հատկապես ամուսնուց և հարազատներից երկար ժամանակով բաժանվելիս:[40] Քանի որ հայելին ունի մոգական ուժ, ապա ամբողջը մասերի բաժանելով, հավանաբար յուրաքանչյուր մասն իր հետ տանում էր ամբողջի մի մասնիկը, այսինքն, իրարից բաժանվող հարազատները բաժանվելիս էլ պահում էին այդ կապը: Հայելին այդ կապի կրողն էր ու պահողը: Պատերազմի դաշտում կամ օտարության մեջ գտնվող հարազատների հետ հաղորդակցվելու համար հայելին դնում էին ջրի մոտ և գուշակություն անում:[41] Եվ դա բնորոշ է ոչ միայն հայերին: Հայտնի է բրոնզե հայելին ջրով լի ամանի մեջ դնելով գուշակություն անելը, որի ժամանակ, ըստ հավատալիքի, տեսնում էին երկնային արքայության դռները:[42]

Հայերը հայելուն տարբեր հատկանիշներ են վերագրել: Հեքիաթներում հայելու խամրելը հերոսի կյանքին սպառնացող վտանգի նշան է: Գուշակության մեջ հայելու մաքրությունը կամ պայծառությունը հաջողության նշան են, իսկ խամրելը՝ դժբախտության:[43] Հայկական հավատալիքներում հայելուն իգական հատկանիշ և միաժամանակ պտղաբերության ուժ է վերագրվել: Դրանով է պայմանավորված այն հավատալիքը, որ եթե առկահատիկի ժամանակ երեխան հայելի վերցնի, ապա հաջորդ երեխան աղջիկ է ծնվելու:[44] Հայելին հավանաբար կապված է ավելի հին հավատալիքի հետ, ըստ որի, նրան վերագրվում էր նաև պտղաբերության ուժ: Կարծում ենք՝ վերջինիս հետ է կապվում հայկական նվագարաններից պարկապզուկին հայելի ամրացնելու սովորույթը:

---

[36] *В. Д в о р н и ч е н к о, Г. Ф е о д о р о в –Д а в ы д о в, Раскопки курганов в зоне строительства Калмыцко-Астраханской и Никольской рисовых оросительных систем. в кн. Сокровища сарматских вождей и древние города Поволжья, М., 1989, стр. 26, 58, 69.*

[37] *Ю. Б а р у з д и н, Карабулакский могильник. Известия АН Кирг. ССР, серия общественных наук, т. III, в. 3, Фрунзе, 1961, стр. 64; Ю. Заднепровский, Археологические памятники южных районов Ошской области (середина I тысячелетия до н.э.- середина I тысячелетия н.э.), Фрунзе, 1960, стр. 112-113, 112-113; М. Дьяконов, Работы Кафирниганского отряда,- МИА, ном. 15, Москва-Ленинград, 1950, стр. 170.*

[38] *Б. Л и т в и н с к и й, указ. соч., 1978. стр. 105.*

[39] *Նույն տեղում, էջ 106:*

[40] *А. М а р а к у е в, Китайские бронзы из Басандайски, Томск, 1947, стр. 171.*

[41] *Լ. Ե գ ա ն յ ա ն, դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Աշոցք:*

[42] *J. C r o u t e, Les fetes annelment celebres a Emoui. Paris, 1886, p. 389.*

[43] *Լ. Ե գ ա ն յ ա ն, ԴԱՆ, Գյումրի:*

[44] *Ե. Լ ա լ ա յ ա ն, Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, N 9, Եր., 1928, էջ 115:*

Շատ ժողովուրդների մոտ կա այն հավատալիքը, որ հայելու կոտրվելը նշանակում է տիրոջ մահը: Նման հավատալիք կա Իրանում, ինչպես նաև ռուսների և տաջիկների մոտ:[45] Հայելու մոգական ուժի մասին հավատալիքներ պահպանվել են նաև հայերի մոտ: Այսպես՝ հայելու կոտրվելը տան անդամի մահ է ենթադրում: Հայտնի է նաև հանգուցյալի տանը հայելիները ծածկելու կամ դեպի պատը շրջելու սովորույթը: Ըստ հավատալիքի՝ հանգուցյալի հոգին մինչև թաղվելը մնում է տանը և կարող է իր հետ տանել հայելու մեջ արտացոլված մարդուն:[46] Հանգուցյալի տանը հայելին փակելու հայերի սովորույթը հավանաբար կապվում է մոգական ուժի շնորհիվ մնոածի պատկերը հայելու մեջ տպավորվելու և ողջերին վնասելու հավատալիքի հետ և միտված է դժբախտությունը կանխելուն: Հավանաբար հավատալիքի գոյությունը բխում է մոտ մարդու մահվան ժամանակ հայելին կոտրելու սովորույթից:[47]

Ասիայի և Եվրոպայի շատ ժողովուրդների մոտ ևս հայելուն վերագրվում է մոգական դեր: Արաբների մոտ հայելին ուներ դժբախտությունից պաշտպանելու մոգական ուժ:[48] Իրանում, կապված հարսանեկան հայելու հետ, կար մի սովորույթ, ըստ որի, այդ հայելու կոտրվելը նշանակում էր հարսի և փեսայի մահ:[49] Նման հավատալիք ունեն նաև տաջիկները:[50] Հայելու կոտրվելը չարագուշակ են համարում նաև հայերը:[51]

Տարբեր ժողովուրդների մոտ կան ջրի հետ կապված տարբեր հավատալիքներ, որոնք կապվում են նաև հայելու հետ: Հին հայերն հավատում էին, որ եթե մութ ժամանակ ջրին խփելու դեպքում ջրի ոգիները կարող են վնասել: Այդ հավատալիքից են բխում հայոց մեջ գոյություն ունեցող մի քանի մոգարգելքներ. ջրում երեխային չխփելը, երեխային լողանալուց հետո ջուրը գիշերով չթափելը և այլն:

Հին Հունաստանում և Հնդկաստանում գոյություն ուներ ջրի մեջ իր արտացոլմանը չնայելու կանոնը, և եթե մարդը երազում տեսնում էր իր արտացոլանքը, հույները դա համարում էին մահվան նախանշան: Նրանք վախենում էին, որ ջրի ոգիները արտացոլանքը կամ հոգին կքաշեն ջրի տակ և մարդը կմեռնի:[52]

Պետք ենթադրել, որ հայելուն վերագրվող տարբեր հատկանիշները գալիս են դեռևս նախնադարյան մարդու մոտ ծագած առաջին մտահանգումից, երբ ջրի մեջ նայող մարդն առաջին անգամ տեսնելով իր արտացոլանքը և չկարողանալով հասկանալ՝ կարող էր միայն վախենալ, սարսափել, այնուհետև ենթարկվել իր իսկ ստեղծած հավատալիքին: Հնարավոր է, այսպես է ծագել Նարկիսոսի դասական առասպելը: Ըստ հունական հայտնի առասպելի՝ Նարկիսոսը ջրի մեջ տեսավ իր արտացոլանքը, սիրահարվեց իր իսկ պատկերին ու մեռավ իր նկատմամբ տածած սիրուց:[53] Ֆրեզերը, վերլուծելով նախնադարից եկող հավատալիքները, գտնում է, որ նախնադարյան մարդը հաճախ իր ստվերին կամ արտացոլված պատկերին նայել է որպես հոգու կամ անձի կենսական մասի, և հենց դրա համար էլ որոշ ժողովուրդներ հավատում են, որ իրենց հոգին ստվերի, ջրի կամ հայելու մեջ է:[54] Երևույթը բնորոշ է նախնադարյան ճոգությանը: Իսկ մոգական մտածողությունը հենվում է երկու սկզբունքի վրա: Դրանցից առաջինը հետևյալն է. նմանը ծնում է նմանին, կամ հետևանքը նման է պատճառին: Իսկ ըստ երկրորդ սկզբունքի՝ այն իրերը, որոնք մեկ անգամ շփվել են իրար հետ, անմիջական շփման դադարումից հետո էլ հեռավորության վրա շարունակում են փոխազ-

---

[45] *С. Х с д о я т, Нейрангистан, пер. Н. Кислякова,- Труды Института этнографии АН СССР, Новая серия, т XXXIV М., 1958, стр. 272, 295.*

[46] *Լ. Ե գ ա ն յ ա ն, ԴԱՆ, Գյումրի:*

[47] *Б. Л и т в и н с к и й, Зеркало в верованиях древних ферганцев, СЭ, N. 3,1964, стр. 99.*

[48] *Н. К а т а н о в, Описание одного металлического зеркала с арабскою надписью, принадлежащего Обществу археологии, истории и этнографии при Казанском университете, Казань, 1898, стр. 4.*

[49] *Նույն տեղում, էջ 258:*

[50] *Б. Л и т в и н с к и й, указ. соч., стр. 99.*

[51] *Լ. Ե գ ա ն յ ա ն, ԴԱՆ, Գյումրի:*

[52] *Ֆ ր ե զ ե ր, Ոսկե ճյուղը, Եր., 1989 թ., էջ 232.*

[53] *Мифологический словарь, М., 1990, стр. 382.*

[54] *Ֆ ր ե զ ե ր, նշվ. աշխ., էջ 231:*

ծել: Առաջին սկզբունքն ընդունված է որպես հոմեոպաթիկ, իսկ երկրորդը՝ չփածին՝ ստ Ֆրեզերի,[55] կամ պարզիանալ՝ ըստ այլ հետազոտողների:[56]

Այսինքն թաղման ծեսում հայելիների օգտագործումը մոգական գործողություն է՝ պայմանավորված փոխազդեցության կապերը խզելուն: Իսկ հնագիտական և ազգագրական նյութերի համադրումը հանգեցնում է այն եզրակացության, որ այդ կապերի խզումը կանխում էր հանգուցյալների կողմից ողջերին հասցվելիք մահացու վտանգը:

АНТИЧНЫЕ ЗЕРКАЛА АРМЕНИИ.

Резюме — *Л. Еганян*

Зеркала из серебра и бронзы типичны для погребений первых веков н.э. и принадлежали к числу наиболее ценных бытовых предметов. Помимо своего бытового назначения, зеркало являлось одним из важных элементов ритуала захоронения.

На материалах раскопок античных некрополей Армении (Арташат, Гарни, Бениамин, Ануштаван) рассматривается ритуальная роль зеркал в погребальном обряде. Сопоставлением археологических и этнографических материалов Армении и сопредельных стран выявлено, что роль зеркал в погребальном обряде связано с представлениями о потустороннем мире и предназначено для предохранения от злых магических сил.

---

[55] *Д. Ф р е з е р, Золотая ветвь, М., 1980, стр. 49 – 60.*

[56] *С. Т о к а р е в, Сущность и происхождение магии. Труды ИЭ, М., 1959, стр. 22.*